ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-19/78

ք. Վանաձոր «26» 08 2019թ.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Մ. Ասլանյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հ.Պողոսյան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Պողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Վանաձոր համայնքի այգիների և պուրակների վերակառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված 45-րդ օրը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների [illegible]սկի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով [illegible]ատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել [illegible]աշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին ա[illegible]մադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100% տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և [illegible]ոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար [illegible]մանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1460 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 37 250 400 (երեսունյոթ միլիոն երկու հարյուր հիսուն հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, որից 6 208 400 (վեց միլիոն երկու հարյուր ութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին 5 336 400 (հինգ միլիոն երեք հարյուր երեսունվեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ որից 889 400 (ութ հարյուր ութսունինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժին 7 186 800 (յոթ միլիոն հարյուր ութսունվեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ որից 1 197 800 (մեկ միլիոն հարյուր իննսունյոթ հազար ութ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

3-րդ չափաբաժին 24 727 200 (քսանչորս միլիոն յոթ հարյուր քսանյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ՝ որից 4 121 200 (չորս միլիոն հարյուր քսանմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող մերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Վանաձորի համայնքապետարան	«Հ. Պողոսյան» ՍՊԸ
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22	ՀՀ, Լոռու մարզ, հ. Գուգարք, 5/35
Կենտրոնական գանձապետարան	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900232539024	Հ/Հ 220053335067000
ՀՎՀՀ 06901936	ՀՎՀՀ 06938057
Մ.Ասլանյան	Հովիկ Պողոսյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
« 26 » 03 2019թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-19/78» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԻՆԵՐԻ և ՊՈՒՐԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ

Պատկերասրահի դիմացի տարածքի բարեկարգում, հիմնանորոգում

Հ/Հ	Հիմնավորումը	Աշխատանքի անվանումը	Չափի միա-վորը	Քանա-կը	1 միավ. ընդհա-նուր արժեքը հազ. դրամ	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
		տարածքի բարեկարգում				
	1-1611 1-1618	սևահողի քանդում մեխանիզմով տեղափոխելով մինչև 30մ և պահեստավորում	1000մ³	0,012	234,50	2,81
2	27-36	բազալտե եզրաքարերի ապամոնտաժում բետոնե հիմքի վրա	մ	268,0	0,222	59,496
3	շուկա	բազալտե եզրաքարերի հղկում	մ	268,0	0,392	105,056
4	27-87	բազալտե եզրաքարերի վերաշարում	100 գծմ	2,68	289,60	776,12
5	46-109	բազալտե սալիկների քանդում	մ²	80,0	0,458	36,640
6	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում/750մ2/	մ³	25,0	4,447	111,175
7	27-22-1 գ-0.5	խճի նախաշերտի քանդում մեխանիզմով	մ³	50,00	1,413	70,650
8	1-968	պահեստավորված սևահողի փռում սիզամարգերում	մ³	12,00	0,968	11,62
9	5-64	ավազի նախաշերտ /750մ2/100մմ հաստության ցեմենտի ավելացումով	մ³	81,0	6,252	506,40
	շուկա	ցեմենտ	տն	2,568	61,037	156,743
11	5-111	սալվածքի երեսապատում բետոնե սալիկներով չափերով 4սմ հաստ.	մ²	780,0	4,709	3673,02
					0,000	
12	1-1592	շին աղբի բարձում էքսկավատորով ինքնաթափին	1000 մ³	0,050	582,518	29,126
13	գ-130-5	շին աղբի տեղափոխում ավտո-ինքնաթափով 10կմ հեռ.	տն	90,00	2,577	231,930
14	1-1592	ա/բետոնի բարձում էքսկավատորով ինքնաթափին	1000 մ³	0,025	582,518	14,563
15	գ-130-10	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 10կմ հեռ.	տն	50,00	2,577	128,850
		Ընդամենը՝				*5914,20*
		պուրակային լուսավորության էլ մոնտաժային աշխատանքներ				
	9-33գ-0.6,0.7	պուրակային պողպատե հենասյուների ապամոնտաժում/14 հատ/	տն	0,84	59,501	49,981
2	շուկա	Պողպատե նոր պուրակային հենասյուների մոնտաժում 3 թևանի /3 լամպի համար/գործարանային արտադրության/16 հատ/	լրա կազմ	4	139,880	559,52
3	8-619-4	կոնսոլային լուսադիոդային լուսատուի տեղադրումLED 40w 220v	հատ	12	11,322	135,86
4	շուկա	խարիսխ պողպատե ծողից Φ12.մմ տեղադրում /12հատ/	կգ	3,200	0,477	1,53
5	8-402-2	հաղորդալար ալյումինե ջիղերով ԱՊՊՎ 2x2,5 մմ²	մ	60,00	0,242	14,52
		Շինարարական աշխատանքներ				
1	1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով փոսերում	մ³	0,60	2,328	1,40

2	Շուկա	Հենասյուների բետոն В 7.5 մ.բ.	մ³	0,540	35,365	19,10
3	1-968	բնահողի հետլիցք ձեռքով	մ³	0,060	0,968	0,06
3	1-968	ավելորդ բնահողի բարձում ձեռքով ա/ինքնաթափին	մ³	0,540	0,968	0,52
4	Գ130-3	ավելորդ բնահողի տեղափոխում ինքնաթափով 3կմ	տն	0,81	1,334	1,081
		Ստորգետնյա մալուխային գիծ 0.22կվա				
1	1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով փոսերում	մ³	18,20	2,328	42,37
2	1-968	բնահողի հետլիցք ձեռքով	մ³	12,70	0,97	12,29
3	1-968	ավելորդ բնահողի բարձում ինքնաթափին ձեռքով	մ³	5,50	0,968	5,324
4	Գ-130-3	քանդված բնահողի տեղափոխում ավտո-ինքնաթափով 3կմ հեռ.	տն	8,25	1,334	11,006
5	8-140-1	ավազի փռում մալուխի տակ	100մ	0,07	29,430	2,060
6	Շուկա	ավազի արժեքը	մ³	5,50	2,568	14,124
7	8-141-1	այլումինե մալուխի փռում խրամուղում 2x10 ԱՎՎԳ	100մ	0,416	52,990	22,044
8	8-141-1	այլումինե մալուխի փռում խրամուղում 2x10 ԱՎՎԳ պաշտպանիչ խողովակով	100մ	0,306	52,990	16,215
9	22-87	պողպատե պաշտպանիչ խողովակ Φ76x3մմ	մ	30,00	4,2	125,490
		Ընդամենը՝				*1034,492*
		Ընդհանուրը՝				*6948,690*
		ԱԱՀ	20%			*1389,738*
		Ընդամենը՝				*8338,428*

Հանրապետության պուրակի բարեկարգում, հիմնանորոգում

Հ/Հ	Հիմնավորումը	Աշխատանքի անվանումը	Չափի միա-վորը	Քանա-կը	1 միավ. ընդհա-նուր արժեքը հազ. դրամ	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
		տարածքի բարեկարգում				
1	1-1611 1-1618	սնահողի քանդում մեխանիզմով տեղափոխելով մինչև 30մ և պահեստավորում	1000մ³	0,010	234,50	2,34
2	27-36	բետոնե եզրաքարերի ապամոնտաժում բետոնե հիմքի վրա	մ	435,000	0,929	404,115
3	5-111 գ-0.15	բետոն սալիկների ապամոնտաժում	մ²	728,000	0,209	152,15
4	46-109	բազալտե սալիկների քանդում	մ²	15,000	0,458	6,870
5	շուկա	ա/բետոնե ծածկույթի ֆրեզերում 30մմ հաստ.	մ²	396,000	1,138	450,648
6	27-169	ասֆալտաբետոնե ծածկույթի իրականացում ,,Դ,, տիպի /մայթերի/ ա/բետոնե ծածկույթով 3սմ հաստ,	100մ²	3,960	305,694	1210,548
7	5-64	ավազի նախաշերտ /728մ2/100մմ հաստության ցեմենտի ավելացումով	մ³	72,800	6,252	455,15
8	շուկա	ցեմենտ	տն	2,184	61,037	133,305
9	5-111	սալվածքի երեսապատում բետոնե սալիկներով չափերով 4սմ հաստ.	մ²	640,000	6,590	4217,60
10	11-221	երեսապատում բազալտե սալիկներով 30մմ	100մ²	0,160	1703,42	272,547
11	1-1592	շին աղբի բարձում էքսկավատորով ինքնաթափին	1000 մ³	0,042	582,518	24,466

[illegible]	Գ-130-5	շին աղբի տեղափոխում ավտո-ինքնաթափով 10կմ հեռ.	տն	75,600	2,577	194,821
		Ընդամենը՝				*7524,56*
		պուրակային լուսավորության էլ մոնտաժային աշխատանքներ				
1	9-33գ-0.6,0.7	կոնսոլային լուսատուներով առկա մետաղական հենասյուների ապամոնտաժում/11 հատ/	տն	0,66	59,501	39,271
2	շուկա	Պողպատե նոր պուրակային հենասյուների մոնտաժում 3 թևանի /3 լամպի համար/գործարանային արտադրության/16 հատ/	լրա կազմ	7,00	139,880	979,16
3	8-619-4	կոնսոլային լուսադիոդային լուսատուի տեղադրումLED 40w 220v	հատ	21,00	11,322	237,76
4	շուկա	խարիսխ պողպատե ծողից Φ12.մմ տեղադրում /18հատ/	կգ	4,81	0,477	2,29
5	8-402-2	Հաղորդալար ալյումինե ջիղերով ԱՊՊՎ 2x2,5 մմ²	մ	90,00	0,242	21,78
		Շինարարական աշխատանքներ				
1	1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով փոսերում	մ³	0,90	2,328	2,10
2	Շուկա	Հենասյուների բետոն B 7.5 մ.բ.	մ³	0,810	35,365	28,65
3	1-968	բնահողի հետլիցք ձեռքով	մ³	0,090	0,968	0,09
4	1-968	ավելորդ բնահողի բարձում ձեռքով ա/ինքնաթափին	մ³	0,810	0,968	0,78
5	Գ130-3	ավելորդ բնահողի տեղափոխում ինքնաթափով 3կմ	տն	1,22	1,334	1,621
		կոնսոլային լուսատուներով առկա հենասյուների վրա պուրակային լուսավորության էլ մոնտաժային աշխատանքներ				
1	8-619-4 գ-0.5	կոնսոլային լուսատուների ապամոնտաժում գործող մետաղական հենասյուներից	հատ	3,00	1,452	4,356
2	8-619-4	կոնսոլային լուսադիոդային լուսատուի տեղադրումLED 100w 220v2 հատ 1լուսատուով	հատ	3,00	36,500	109,50
3	8-402-2	Հաղորդալար ալյումինե ջիղերով ԱՊՊՎ 2x2,5 մմ²	մ	15,00	0,242	3,63
4	8-402-2	Հաղորդալար ալյումինե ջիղերով ԱՊՎ 1x2.5 մմ²	մ	3,00	0,200	0,600
5	15-614	առկա մետաղական հենասյուների յուղաներկում 2 անգամ	100մ²	0,09	126,383	11,37
6	8-114-6	տուփ բաժանարար Y994	հատ	1,00	0,613	0,613
		Ստորգետնյա մալուխային գիծ 0.22կվա				
1	1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով փոսերում	մ³	39,000	2,328	90,79
2	1-968	բնահողի հետլիցք ձեռքով	մ³	27,700	0,97	26,81
3	1-968	ավելորդ բնահողի բարձում ինքնաթափին ձեռքով	մ³	11,300	0,968	10,938
4	Գ-130-3	քանդված բնահողի տեղափոխում ավտո-ինքնաթափով 3կմ հեռ.	տն	16,950	1,334	22,611
5	8-140-1	ավազի փռում մալուխի տակ	100մ	1,500	29,430	44,145
6	Շուկա	ավազի արժեքը	մ³	11,300	2,568	29,018
7	8-141-1	ալյումինե մալուխի փռում խրամուղում 2x10 ԱՎՎԳ	100մ	1,352	52,990	71,642
8	8-141-1	ալյումինե մալուխի փռում խրամուղում 2x10 ԱՎՎԳ պաշտպանիչ խողովակով	100մ	0,204	52,990	10,810

9	22-87	պողպատե պաշտպանիչ խողովակ Φ76x3մմ	մ	20,000	4,2	83,660
		Ընդամենը՝				*1834,005*
		Ընդհանուրը՝				*9358,57*
		ԱԱՀ	20%			*1871,71*
		Ընդամենը՝				*11230,28*

Ռ. Սեակի անվան երիտասարդական զբոսայգու բարեկարգման հիմնանորոգման

Հ/Հ	Հիմնավորումը	Աշխատանքի անվանումը	Չափի միա-վորը	Քանա-կը	1 միավ. ընդհա-նուր արժեքը հազ. դրամ	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
		տարածքի բարեկարգում				
1	1-1611 1-1618	սևահողի քանդում մեխանիզմով տեղափոխելով մինչև 30մ և պահեստավորում	1000մ³	0,020	234,498	4,690
	27-36	բազալտե եզրաքարերի ապամոնտաժում բետոնե հիմքի վրա	մ	800,0	0,222	177,600
3	5-111 գ-0.15	բետոն սալիկների ապամոնտաժում	մ²	1090,0	0,209	227,810
4	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	75,0	4,447	333,525
5	27-22-1	խճի նախաշերտի կառուցում (հաստ.-80մմ)	մ³	128,20	10,902	1397,636
6	27-164-2 27-165-2	Ծածկույթի կառուցում մանրահատիկ «Դ» տիպի ա/բետոնով /30մմ/	100մ²	10,00	308,951	3089,510
7	27-164-2 27-165-2	Ծածկույթի կառուցում մանրահատիկ «Դ» տիպի ա/բետոնով կարմիր/30մմ/	100մ²	25,64	314,399	8061,190
8	5-64	ավազի նախաշերտ /1090մ2/100մմ հաստության ցեմենտի ավելացումով	մ³	109,0	6,252	681,468
9	շուկա	ցեմենտ	տն	3,270	61,037	199,591
10	5-111	սալվածքի երեսապատում բետոնե սալիկներով չափերով 4սմ հաստ.	մ²	1090,0	4,068	4434,120
1	11-55 11-56	Տ/ավազե հարթեց. շերտ 30մմ հաստ.	100մ²	0,200	133,894	26,779
12	11-221	երեսապատում բազալտե սալիկներով 40մմ	100մ²	0,20	1848,382	369,676
13	27-79	հավաքովի բետոնե եզրաքարերի տեղադրում 200 x 60մմ բետոնե հիմքի վրա	գծմ	800,0	5,772	4617,600
		-			0,000	
14	27-79	գոյություն ունեցող եզրաքարերի վերատեղադրում բետոնե հիմքի վրա	գծմ	1000,0	2,032	2032,000
		-			0,000	
15	1-1592	շին աղբի բարձում էքսկավատորով ինքնաթափին	1000 մ³	0,080	582,518	46,601
16	գ-130-5	շին աղբի տեղափոխում ավտո-ինքնաթափով 10կմ հեռ.	տն	120,00	2,577	309,240
1	1-1592	ա/բետոնի բարձում էքսկավատորով ինքնաթափին	1000 մ³	0,072	582,518	41,941
18	գ-130-10	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 10կմ հեռ.	տն	115,20	2,577	296,870
		Ընդամենը՝				*26347,849*
		պուրակային լուսավորության էլ մոնտաժային աշխատանքներ				
1	9-33գ-0.6,0.7	Պողպատե հենասյուների ապամոնտաժում/22 հատ/	տն	1,30	59,501	77,351
2	շուկա	Պողպատե նոր պուրակային հենասյուների մոնտաժում 3 թևանի /3 լամպի համար/գործարանային արտադրության/16 հատ/	լրա կազմ	22	139,880	3077,360

3	8-619-4	փողոցային կոնսոլային լուսադիոդային լուսատուի տեղադրումLED 40w 220v	հատ	66	11,322	747,252
4	շուկա	խարիսխ պողպատե ձողից Φ12.մմ տեղադրում /44հատ/	կգ	11,750	0,477	5,605
5	8-402-2	Հաղորդալար ալյումինե ջիղերով ԱՊՊՎ 2x2,5 մմ^2	մ	220,00	0,242	53,240
		Շինարարական աշխատանքներ				
1	1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով փոսերում	մ^3	2,20	2,328	5,122
2	Շուկա	Հենասյուների բետոն B 7.5 մ.բ.	մ^3	2,000	35,365	70,730
3	1-968	բնահողի հետլիցք ձեռքով	մ^3	0,200	0,968	0,194
4	1-968	ավելորդ բնահողի բարձում ձեռքով ա/ինքնաթափին	մ^3	2,000	0,968	1,936
5	Գ130-3	ավելորդ բնահողի տեղափոխում ինքնաթափով 3կմ	տն	3,00	1,334	4,002
		Կոնսոլային լուսատուներով առկա հենասյուների վրա պուրակային լուսավորության էլ մոնտաժային աշխատանքներ				
1	8-619-4 գ-0.5	կոնսոլային լուսատուների ապամոնտաժում գործող մետղական հենասյուներից	հատ	4	1,452	5,808
	9-33գ-0.6,0.7	կոնսոլային լուսատուներով առկա մետաղական հենասյուների ապամոնտաժում	տն	0,06	59,501	3,570
3	8-619-4	կոնսոլային լուսադիոդային լուսատուի տեղադրումLED 100w 220v2 հատ 2 լուսատուով	հատ	4	36,500	146,000
4	8-402-2	Հաղորդալար ալյումինե ջիղերով ԱՊՊՎ 2x2,5 մմ^2	մ	20,00	0,242	4,840
5	8-402-2	Հաղորդալար ալյումինե ջիղերով ԱՊՎ 1x2.5 մմ^2	մ	4,0	0,200	0,800
6	15-614	առկա մետաղական հենասյուների յուղաներկում 2 անգամ	100մ^2	0,06	126,383	7,583
7	8-114-6	տուփ բաժանարար Y994	հատ	2	0,613	1,226
8	8-150-4	Մալուխի տեղադրում 2x10 ԱՎՎԳ հենասյուների վրայով	մ	63,00	0,825	51,975
		Ստորգետնյա մալուխային գիծ 0.22կվա				
1	1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով փոսերում	մ^3	143,00	2,328	332,904
2	1-968	բնահողի հետլիցք ձեռքով	մ^3	101,50	0,968	98,252
3	1-968	ավելորդ բնահողի բարձում ինքնաթափին ձեռքով	մ^3	41,50	0,968	40,172
4	Գ-130-3	քանդված բնահողի տեղափոխում ավտո-ինքնաթափով 3կմ հեռ.	տն	62,25	1,334	83,042
5	8-140-1	ավազի փռում մալուխի տակ	100մ	5,50	29,430	161,865
6	Շուկա	ավազի արժեքը	մ^3	41,50	2,568	106,572
7	8-141-1	ալյումինե մալուխի փռում խրամուղում 2x10 ԱՎՎԳ	100մ	4,576	52,990	242,482
8	8-141-1	ալյումինե մալուխի փռում խրամուղում 2x10 ԱՎՎԳ պաշտպանիչ խողովակով	100մ	1,12	52,990	59,455
	22-87	պողպատե պաշտպանիչ խողովակ Φ76x3մմ	մ	110,00	4,183	460,130
		Ընդամենը՝				*5849,467*
		Ընդհանուրը՝				*32197,316*
		ԱԱՀ	20%			*6439,463*
		Ընդամենը՝				*38636,779*

Նախատեսվում են իրականացնել հետևյալ հիմնական շինարարական և մոնտաժային աշխատանքները, մասնավորապես՝

- Հատակների ծածկույթների հինշերտերի քանդում և տեղափոխում
- Նոր նախաշերտերի կառուցում
- Ճեմուղիների կառուցում բետոնե դեկորատիվ գունավոր սալիկներով

- Ճեմուղիների և հեծանվային ուղիների կառուցում ասֆալտբետոնե ծածկույթից
- Նոր եզրաքարերի տեղադրում, հին եզրաքարերի նորոգում, ուղղում
- Սիզամարգերի կառուցում
- Արտաքին պուրակային լուսավորության մոնտաժում, ներառյալ էլ. սնուցման արտաքին գծերը, լուսատուները

Աշխատանքները կատարել համաձայն հետևյալ նորմաների, ծավալաթերթով և հաստատված նախագծով.

Աշխատանքների համար երաշխիքային ժամկետ է համարվում 1460 օրը:
Աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվում պայմանագրի կնքման օրվանից հաշված 45 օր:
Աշխատանքներն իրականացնել հատուկ բանվորական արտահագուստով՝ պահպանելով անվտանգության կանոնները:
Յուրաքանչյուր կատարողական կամ հանձնման-ընդունման փաստաթղթերի հետ ներկայացնել տեղադրվող բետոնե դեկորատիվ սալիկների լաբորատոր փորձարկման ակտերը, կամ սերտիֆիկատները ԳՕՍՏ 17608-91 <<Մայթի բետոնե սալեր. Տեխնիկական պայմաններ>>-ին համապատասխան:
Կից ներկայացվում է հիմնանորոգման ենթակա այգիների և պուրակների ծավալաթերթերը՝ ըստ չափաբաժինների:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Վանաձորի համայնքապետարան ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22 Կենտրոնական գանձապետարան Հ/Հ900232539024 ՀՎՀՀ 06901936 Մ.Ասլանյան --- /ստորագրություն/ Կ.Տ	«Հ. Պողոսյան» ՍՊԸ ՀՀ, Լոռու մարզ, հ. Գուգարք, 5/35 «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլբանկ» ՓԲԸ Հ/Հ 220053335067000 ՀՎՀՀ 06938057 Հովիկ Պողոսյան --- /ստորագրություն/ Կ.Տ

« 26 » 08 2019թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-19/78» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԻՆԵՐԻ և ՊՈՒՐԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	***Կ. Աբովյանի անվան պատկերասրահի հյուսիսային կողմի պուրակի վերակառուցում,վերականգնում***	Պայմանագրի կնքման պահից	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 45-րդ օրը
2	***Հանրապետության պուրակի վերակառուցում,վերականգնում***	Պայմանագրի կնքման պահից	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 45-րդ օրը
3	***Ռ. Սևակի անվան երիտասարդական զբոսայգու վերակառուցում, վերականգնում***	Պայմանագրի կնքման պահից	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 45-րդ օրը
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագրի կնքման պահից	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 45-րդ օրը

<u>Ծանոթություն</u>

<u>Ծավայաթերթերում մեկ միավորի արժեքի մեջ ներառված են վերադիր ծախսերը 13.3%, շահույթը 11%, ժամանակավոր շենքերի և շինությունների արժեքը 0,5%, կլիմայական պայմանների ազդեցությունից առաջացած ծախսը 0,45%, չնախատեսված ծախսերը 1,5%</u>

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ900232539024
ՀՎՀՀ 06901936
Մ.Ալանկյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Հ. Պողոսյան» ՍՊԸ
ՀՀ, Լոռու մարզ, հ. Գուգարք, 5/35
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլբանկ» ՓԲԸ
Հ/Հ 220053335067000
ՀՎՀՀ 06938057
Հովիկ Պողոսյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 3
« 26 » 03 2019թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-19/78» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45451700/2	Կ. Աբովյանի անվան պատկերասրահի հյուսիսային կողմի պուրակի վերակառուցում,վերականգնում	-	-	-	-	-	-	**5 336 400**	**5 336 400**	**5 336 400**	**5 336 400**	**5 336 400**	**5 336 400**	**5 336 400**
2	45451700/3	Հանրապետության պուրակի վերակառուցում,վերականգնում	-	-	-	-	-	-	**7 186 800**	**7 186 800**	**7 186 800**	**7 186 800**	**7 186 800**	**7 186 800**	**7 186 800**

3	45451700/4	Ռ. Սևակի անվան երիտասարդական զբոսայգու վերակառուցում, վերականգնում	-	-	-	-	-	-	24 727 200	24 727 200	24 727 200	24 727 200	24 727 200	24 727 200	24 727 200

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան

ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22

Կենտրոնական գանձապետարան

Հ/Հ900232539024

ՀՎՀՀ 06901936

Մ.Ասլանյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Հ. Պողոսյան» ՍՊԸ

ՀՀ, Լոռու մարզ, հ. Գուգարք, 5/35

«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլբանկ» ՓԲԸ

Հ/Հ 220053335067000

ՀՎՀՀ 06938057

Հովիկ Պողոսյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 2019թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 2019թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն